

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Աշխատանքի անվանում

Մաքրման կայանի և քլորի օպերատոր, փականագործ-բանվոր

### Աշխատանքի վայր

ք. Դիլիջան, Լոռի, Կապան, Մեղրի, Վայք, Տաշիր, Չարենցավան

### Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

### Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Առողջության ապահովագրություն

**«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:**

### Աշխատանքի նկարագիր

- Ապահովել մաքրման կայանի պատշաճ տեխնիկական շահագործումը և աշխատանքային բնականոն ռեժիմը. խմելու ջրի հուսալի, անխափան և տեխնիկա-տնտեսական բարձր ցուցանիշներով մղումը բաժանորդներին՝ պահպանելով դեկլարացիայի կողմից հաստատված աշխատանքային գրաֆիկները;
- Ապահովել քլորակայանով անցնող խմելու ջրի ողջ քանակության անընդմեջ վարակազերծման գործընթացը՝ համաձայն ջրի քլորապահանջի, խառնվող և մնացորդային քլորի քանակների վերաբերյալ հաստատված նորմերի և հրահանգների;
- Քլորի չափաբաժնի և քլորի սարքավորումների աշխատանքի հսկում, առաջացած թերությունների վերացում, իրականացնել քլորացնող սարքավորումների սպասարկման աշխատանքները;
- Սահմանված ժամկետներում փոխարինել քլորի տարրաները, հաղորդել տվյալները տեղեկատվական ծառայություն և արձանագրել գրանցամատյանում;
- Հետևել խառնարաններում ռեագենտների և մշակվող ջրի խառնման ընթացքին, ռեագենտի բաշխվածությանը մշակվող ջրի մասսայում;
- Պարբերաբար մաքրել ջրընդունիչները, հետևել խառնարանների և պարզարանների սարքավորումների, ջրընդունիչների վիճակին;
- Ապահովել պարզարաններում պահանջվող քանակի ջրի պարզեցումը, հետևել պարզարաններում նստվածքի կուտակմանը (շերտի բարձրությանը) և նրա ազդեցությանը կառուցվածքի աշխատանքի ռեժիմի վրա;
- Պահպանել ֆիլտրման նախատեսված արագությունները, հետևել ճնշման կորուստների աճին և մաքրված ջրի որակին, ժամանակին անջատել ֆիլտրման կառուցվածքները լվացման համար և հետևել դրա լվացման որակին;

- Հետևել մաքրման կայանում տեղակայված սարքավորումների, մեխանիզմների, հարմարանքների, փականների, հիդրավլիկական և էլեկտրական շարժաբեռների չափիչ-հսկիչ սարքերի, ղեկավարման վահանների անխափան և բնականոն աշխատանքին,
- Վարել քլորածախսի վերաբերյալ գրանցման համապատասխան մատյանը;
- Ապահովել կոագուլավորման սարքավորումների անխափան աշխատանքը և պատշաճ շահագործումը;
- Կայանի սարքավորումների, կառուցվածքների և հիդրավլիկ արմատուրայի շահագործում և մաքրում;
- Վթարային իրավիճակների ստեղծման և/կամ անսարքությունների հայտնաբերման պարագայում անհապաղ տեղեկացում անվիջական ղեկավարին և կարգավարական կետ;
- Մաքրման կայանի տարածքի բարեկարգման և մաքրման աշխատանքների կատարում;
- Պահպանել աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային պաշտպանության կանոնները;
- Խնամքով և պատշաճ օգտագործել Ընկերության կողմից տրամադրված գործիքները, սարքավորումները, անհատական պաշտպանության միջոցները և արտահագուստը:

## Պահանջներ

- Մարքավորումների վերանորոգման, սպասարկման և պահպանման կանոնների իմացություն
- Վերանորոգվող սարքավորումների կոնստրուկտիվ առանձնահատկությունների տիրապետում
- Էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի, հեռամեխանիկայի, էլեկտրոնիկայի հիմունքներ, տարբեր սարքավորումների էլեկտրական սխեմաների, չափումների իմացություն
- Մոնտաժման աշխատանքների կազմակերպման և տեխնոլոգիայի իմացություն
- Թիմային աշխատանք
- Պատասխանատվության զգացում

## Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները/CV [hr@vjur.am](mailto:hr@vjur.am) էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Մաքրման կայանի և քլորի օպերատոր, փականագործ-բանվոր** կամ զանգահարել **033-144-748** հեռախոսահամարին: Հարցազրույցին մասնակցելու համար կիրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: